ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև մշակութային և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների ամրապնդման և մշակութային ու գիտատեխնիկական համագործակցության զարգացման նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կխրախուսեն և կաջակցեն երկու երկրների համապատասխան հաստատությունների և կազմակերպությունների միջև փոխանակմանն ու համագործակցությանը մշակույթի, կրթության, գիտության, տեխնիկայի, առողջապահության, սպորտի, հրատարակչության, ժուռնալիստիկայի, հեռուստատեսության և ռադիոյի, կինոյի և զբոսաշրջության բնագավառներում:

Հոդված 2

Կողմերը կնպաստեն արվեստի և մշակույթի բնագավառներում համագործակցությանը գեղարվեստական խմբերի փոխանակման, ցուցահանդեսների և մշակույթի օրերի կազմակերպման միջոցով:

Հոդված 3

Կողմերը կնպաստեն կրթության բնագավառում համագործակցությանը երկու երկրների կրթական հաստատությունների միջև անմիջական կապեր հաստատելու, մյուս Կողմի դասախոսներին և գիտնականներին կարճատև դասախոսությունների հրավիրելու, ինչպես նաև ուսանողներին և ասպիրանտներին ուսուցման ընդունելու միջոցով:

Հոդված 4

Կողմերը կնպաստեն գիտության և տեխնիկայի բնագավառում համագործակցությանը գիտական և տեխնիկական հանձնախմբերի, առանձին գիտնականների և մասնագետների փոխանակման միջոցով:

Հոդված 5

Կողմերը կխրախուսեն իրենց երկրների մասնագետների մասնակցությունը մյուս Կողմի տնտեսական ծրագրերի իրագործմանը:

Հոդված 6

Կողմերը սույն Համաձայնագրի հիման վրա կնքված պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում կաջակցեն երկու երկրների համապատասխան գերատեսչությունների գիտատեխնիկական համագործակցությանը, հիմնարկությունների ստեղծմանը:

Հոդված 7

Կողմերը փոխանակություն և համագործակցություն կիրագործեն ժուռնալիստիկայի և հրատարակչության բնագավառներում:

Հոդված 8

Կողմերը կխթանեն անմիջական համագործակցությունը երկու երկրների զանգվածային լրատվության միջոցների, հեռուստատեսության և ռադիոհաղորդումների համապատասխան հաստատությունների միջև, ներառյալ ռադիոծրագրերի և հեռուստատեսային ծրագրերի փոխանա-կությունը:

Հոդված 9

Կողմերը կնպաստեն կինոյի շաբաթների կազմակերպմանը կինոյի բնագավառի գործիչների մասնակցությամբ:

Հոդված 10

Կողմերը կխթանեն և կաջակցեն երկու երկրների առողջապահական հաստատությունների միջև անմիջական կապերին և համագործակցությանը՝ նպատակ հետապնդելով ամրապնդել և զարգացնել համագործակցությունը առողջապահության բնագավառում,

փորձի փոխանակումը երկու երկրների առողջապահության համակարգերի զարգացման և կատարելագործման ուղղությամբ:

Հոդված 11

Կողմերը կխրախուսեն և կնպաստեն երկու երկրների զբոսաշրջության հիմնարկների միջև գործնական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը՝ երկու երկրների ժողովուրդներին միմյանց կյանքին, աշխատանքին և մշակույթին առավել լիարժեք ծանոթացնելու նպատակով:

Հոդված 12

Կողմերը կմշակեն կոնկրետ պլաններ սույն Համաձայնագրի իրագործման համար և կպայմանավորվեն ֆինանսական հարցերի շուրջ:

Կողմերի համապատասխան գերատեսչությունները սույն Համաձայնագրի հիման վրա կարող են երկկողմ պայմանագրեր, արձանագրություններ և պլաններ ստորագրել սույն համագործակցության առանձին, գործնական ուղղությունների վերաբերյալ:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կգործի 5 տարվա ընթացքում: Եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ գրավոր չի տեղեկացնի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր խնդրանքի մասին, ապա դրա գործողության ժամկետն ամեն անգամ ինքնաբերաբար կերկարաձգվի:

Կատարված է Հանոյ քաղաքում 1992 թվականի դեկտեմբերի 13-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վիետնամերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի տարընթերցման դեպքում Կողմերը կճշգրտեն իրենց դիրքորոշումը ռուսերեն կից տեքստի հիման վրա:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի դեկտեմբերի 13-ից: